

2816
U-43

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻԻ

«Մարդը, որ կ'ուզի համարանրանը
սեանի, պէտք է համարանրան հաս-
տատ կանն իր մէջ: Պէտք է, որ միտք
լինի մը սեռած ջուրին պէս ըլլայ»:

Յօդ. Ա., ԳԱՐՐԻԷՒ

Մ. ՍԵՐՈԲԵԱՆ

Տպ. «ԱԶԳԱՅ» Պէրուր

1938

9867

Բարեկամական յարգանքի գրական տուրք մե

Ն ո ռ զ ը ո ճ ւ ծ

ԱՐՈՒՆՏԱՏԱՏԻՈՒՀԻ ԵՆ ԽԱՆՆԱԿԱԹ ՄՕՐ ՄԸ
ՏԻԿԻՆՉԻՅԱՆՅԵ Կ ՊԱՆԱՆԻ

ՏԽՈՒՐ ՅԻՇՆԱՏԱԿԻՆ



85-82081



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Աշխարհի մէջ ամէն կողմակերպութիւն, ըլլալ կրօնական, քաղաքական, ընկերական թէ ընտանեկան, ենթակայ եղած են չարունակական փոփոխութիւններու: Անոնք, որ անընդունակ գտնուած են և անընթաց մար, գոհացում տալու ժամանակի պէտքերուն և պահանջներուն, բնականաբար հարկադրուեք են իրենց անդը թողուլ նոր կողմակերպութիւններու:

Եթէ թղթատենք տիեզերական պատմութիւնը, և պեղումներու յատուկ ուսումնասիրութիւնները, պիտի տեսնենք, թէ հիմնական նորութիւն գոյութիւն չ'ունի ո՛րէէ մարդի մէջ, փոփոխութիւններ կան միայն կամ բարեփոխումներ ժամանակի ըմբռնումներու և հաւտուած փոփոխութիւններու: Պատմութիւնը չի՛նուած է միւս ուսումնասիրութիւններու, կրօններու, ընտանեկան և ընտանեկան կողմակերպութիւններու և անոնց ստեղծած քաղաքակրթութիւններու աւերակայտէն: Կործանուած դասերու, խորտակուած թագերու, փլած ամառներու և խորաններու բեկորներէն: Անոնցմէ իւրաքանչիւրը իրենց ժամանակի պէտքերուն և պահանջներուն գոհացում տուին, և երբ տեսան, թէ իրենք այլ ևս անկարող են նոր պահանջներու յարմարելու, կամու թէ ակամայ քաշուեցան սուպրէզէն, թողուլ ուր նոյնը

յղացումներու արգելիք նոր կազմակերպութիւններ, իրենց տեղը բռնեն :

Քրիստոնէութենէն շատ աւելի հին, բարձր ու փիւր սոփոյայական կրօններ ու քաղաքակրթութիւններ ծընած ու մեռած են ժամանակի չփուռնէն մաշուելով, թողով որ իրենց բեկորները գործածուին, իրբու ատղձ, նոր կառուցումներու համար։ Եւ մարդկութեան յառաջնադարութիւնը, քաղաքակրթութեան ճամբուն վրայ, միշտ վերելք մը չէ՛ եղած, և պէսպիսուած է յաճախ անկումներով ու ընկրկումներով։ Եւ պիտի կրնանք ըսել, թէ ո՛չ նոր կրօն գոյութիւն չունի աշխարհի մէջ, և ո՛չ ալ նոր քաղաքակրթութիւն։ Այսօր մեր թէևուք գոնուածները հիներուն կերպափոխումներն են միայն, յարգարուած ու կազմաւորուած, ժամանակի պէտքերուն և պահանջներուն համաձայն :

Քրիստոնէութիւնը, իբր մէկ աղանդը Մովսիսու կանոնութեան(*), ամբապնդուած յունական փիլիսոփաւ

(*) Քրիստոս կրօնք մը չէր որ կը քաղար, այլ բարոյական մը...։ Քաղաքուած բարոյականը նորաբխ մը չէր բոլորովին, այլ կասարեկաբար մը հին օրհնիքն, Յուսանոր արտաքին ոգեկան բացատրութիւնը. «Քրիստոս կը սպաննէ, նոզին կ'ապրեցնէ»։ Այս մեկնութիւնը անհրաժեշտ էր հրեական շարժանքուած ծիսապատկերեան մտեալ տառն ոգեւորելու... համար։ ... Միայն հասկցան զիմքր Յիսուսի հակառակորդները, անոնք որ ծեպին ու գրին մարդիւն էին. զիմքր սխալ հասկցան նաեւ իր բարեկամները, որոնք պատրաստուած չէին իր ոգիին մեծութիւնը բարձրանելու։ Կարելի չէր արբեր աղիւնիք սպասել, քանի որ Քրիստոս, հակառակ իր յայտարարութեան եւ սկզբունքին, հարկադրուած էր հին սփիլիսոս մէջ լեցնել նոր գիւնիք։ (Տես, մեր «Պատմութիւն և եկեղեցի» 9. (Ս. Մանուկ, 15 սեպտ. 1920 թիւ 2349):

յութեան հեթանոս չաղախով, ստեղծելով հանգերձ ուսուցիչներու և սաստուածաբաններու շարքին մէջ տալիս քաղաքակրթիւններ, իր ծագման օրերուն ունեցաւ անհայտ իր բարեբար ազդեցութիւնը, իր ընկերակցութեան պատահըներով, և մաքուր կեանքի իր յարաբերական տեսլականով, երբ հեթանոս աշխարհը իր հայրենիքի չափազանցութիւններով, և իր գեհնիկ յափրաւցումներով այդ մաքուր կեանքին, այդ յարաբերաբար բարձր բարոյականին ստեղծումը անհրաժեշտ դարձուցած էր :

Բայց Քրիստոնէութեան բարոյականին և անոր ստեղծելիք քաղաքակրթութեան հիմերը չափազանց խախտու էին, պատիժի ու վարձքի այն կրօնքեամբ, զոր փոխ առած էր չիջած կրօններէ։ Բարոյական մը, որ կը հիմնուէր պատիժի ու վարձքի հիման վրայ, չէր կրնար սիրոյ բարոյական մը ըլլալ, այլ կեղծաւոր բարոյական մը։ Քրիստոնէութիւնը, որ իբր կրօն չէր կրնար գերութիւնը ընջել, և գերիներուն կը հրամայէր հնազանդի իրենց տէրերուն, որ խոնարհութեան պատարուակի տակ կը հրամայէր հանդուրժել նախապիքի ու անկրօնութեան, և մէկ երեւին ապաստան գործողին նոր գերիներու և արուճեկներու կրօն մը ըլլալ, բայց ո՛չ պատուախնդիր, ու արատութեան և իրաւունքի ու գիտով տարուած մարդերու կրօնը։ Եւ եթէ երեք դարեր իր հալածուեցաւ Հռովմէական կայսրութեան կողմէն, հալածուեցաւ անոր համար, որ ո՛չ միայն կը հակասէր պետութեան ազգային կրօնին, այլ և անոր բանակները կը հրապարակէր զինուորական ծառայութեան դէմ իր քարոզած բնութարարութեամբ :

